

«Սեր» – 24.05.2020, Արթուր Սիմոնյան

Սերը գործողություն է, որ մարդը պետք է կատարի:

«Եվ անօրենության շատանալու պատճառով շատերի սերը կսառչի» (Մատթեոս 24.12):

Մենք այս խոսքը պետք է անգիր հիշենք: Ի՞նչն է պատճառը, որ սերը սառչում է հարազատների, ամուսնու կամ կնոջ նկատմամբ. անօրենության շատանալը: Որքան անօրենությանը տեղ տանք, այնքան սերը կսառչի: Յուրաքանչյուր մարդ կարող է սերը սառեցնել և ջերմացնել: Երբ մարդն ասում է՝ իմ սերը սառել է, նշանակում է, որ նա մոտակա ժամանակահատվածում չի սիրելու:

Այսօր մենք չենք սիրում. ազգի մի մասը չի սիրում կառավարությանը, ոստիկանությանը, զինվորական ծառայողներին: Մարդիկ լցված են պատգամավորների, բիզնեսմենների, ընդդիմության դեմ: Բոլորը քննադատում են միմյանց, և այսպես վարվելով՝ գնում ենք դեպի անդունդը: Մեզ կվերականգնի միայն այն, որ սերը ջերմացնենք: Յուրաքանչյուր մարդ կարող է սերը ջերմացնել՝ պարզապես մի օր կանգ առնել, դադարել անօրինություն գործելուց:

Եթե մեքենայի արգելակները չաշխատեն, մեքենան վթարի կենթարկի և կկործանի վարորդին: Մեր կյանքի «արգելակները» պետք է հրաշալի աշխատեն, որպեսզի կանգ առնենք այնտեղ, որտեղ ատելությունն սկսում է փոխարինել սիրուն, և հետո առաջ շարժվենք՝ սիրով լցված:

Եկեք ողջ եկեղեցով, ազգով, բոլորով ուղղակի արգելակենք ատելությունը:

Ա Կորնթացիս 13-րդ գլուխը մեզ սովորեցնում է սիրո մասին:

Աստված սիրեց մեզ և Իր Միածին Որդուն տվեց. մենք նույնպես պետք է սիրով լցված լինենք:

Խոսքն ասում է, որ սիրուց առավել ոչինչ չկա: Որքան էլ իմաստուն, զորավոր քարոզիչ կամ քաղաքական գործիչ լինես, միևնույնն է, քո կշիռը պայմանավորվում է նրանով, թե որքան սեր ունես մարդկանց հանդեպ: Աստված նայում է ամեն մեկիս սրտին՝ որքանով ենք սիրով լցված մեկս մյուսի հանդեպ:

Սերը միակ զգացմունքն է, որ մեզ պետք է և՛ այստեղ՝ երկրի վրա, և՛ Երկնքում:

Պողոս առաքյալը մեզ սովորեցնում է, որ եթե անգամ հրաշքներ գործենք, բայց սեր չունենանք, մենք ոչինչ ենք:

Աստված մեզ փրկել է ոչ միայն փրկված լինելու, այլև Իրեն նմանվելու համար:

Ատելությունը տանջանք է, իսկ սերը՝ հանգստություն: Ատելությունը վերանում է միայն սիրո միջոցով: Մենք կանչված ենք ներելու և սիրելու համար:

«Այսուհետև, եղբայրներ, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն, ինչ որ բարի անուն ունի, թե՛ առաքինություն է և թե՛ գովություն է, այն մտածեք» (Փիլիպպեցիս 4.8):

Ամեն բան սկսվում է մտքից: Եվ Աստծո խոսքը նախ փոխում է մեր միտքը: Մտածի՛ր այն, ինչ գեղեցիկ է, պարկեշտ, բարի, այդ ժամանակ հոգիդ էլ երջանիկ կլինի, մարմինդ էլ պղծությունների մեջ չի ընկնի:

Եկեք փոխենք մեր մտածելակերպը Զրիստոսի ճանապարհների համեմատ:

«Ոչ ոք իր անձը չի ատի, այլ կերակրում է և պահպանում է նրան, ինչպես Տերն էլ եկեղեցին» (Եփեսացիս 5.28,29):

Սերը գործողություն է՝ կերակրում, պահպանում, խնամում է: Հենց այս գործողություններն են, որ դրսևորվում են մեր շրջապատի նկատմամբ, երբ լցված ենք սիրով: